

ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ԹՈՒՐԹԻԱՅՈՒՄ

Posted on August 20, 2015 by Keghart

keghart.com

Category: [Opinions](#)



✖ Սաիթ Զեթինսոլլու, Թուրքիա, 8 Օգոստոս 2015

Հունիսի 7-ին Թուրքիայում կազմակերպվեցին խորհրդարանական ընտրություններ, այսպիսով հասկանալի էր դառնալու ընտրվող բռնապետի գոյությունը:



Չնայած ոչ օրինական պալատում բնակվող անձը մինչեւ հիմա չի հրաժարվել այս ցանկությունից, ընտրություններից հետո, ազգայնամոլների համախմբված *Ազգային Շարժում Կուսակցության* անվճռական վերաբերմունքից քաջություն ստացող Էրդողանը, կարող ենք ասել, որ նշյալ իրավիճակը փորձում է առիթ դարձնել եւ գրոհումներ կատարել: Վերջին օրերում կատարվող իրադարձությունները կարելի է համարել Էրդողանի, հունիսի 7-ի վրեժը լուծելու համապատասխան քայլերը:

✖ Սաիթ Զեթինսոլլու, Թուրքիա, 8 Օգոստոս 2015

Հունիսի 7-ին Թուրքիայում կազմակերպվեցին խորհրդարանական ընտրություններ, այսպիսով հասկանալի էր դառնալու ընտրվող բռնապետի գոյությունը:



Չնայած ոչ օրինական պալատում բնակվող անձը մինչեւ հիմա չի հրաժարվել այս ցանկությունից, ընտրություններից հետո, ազգայնամոլների համախմբված *Ազգային Շարժում Կուսակցության* անվճռական վերաբերմունքից քաջություն ստացող Էրդողանը, կարող ենք ասել, որ նշյալ իրավիճակը փորձում է առիթ դարձնել եւ գրոհումներ կատարել: Վերջին օրերում կատարվող իրադարձությունները կարելի է համարել Էրդողանի, հունիսի 7-ի վրեժը լուծելու համապատասխան քայլերը:

Դրա համար էլ՝ *Քաջ Ակսարայ* կոչվող փախստական պալատում բնակվող անձը փորձում է արագացնել քաղաքացիական հեղափոխության անվան տակ հարված հացնել երկրին: Արդեն իշխանությունը նմանվել է քարտուղարության ապարատի: Այսպիսով, առանց իշխանության կառուցվածքի, փորձում է անսովոր իրավիճակը սովորական դարձնել: Ընրություններից անմիջապես առաջ խորհրդարանում ընդունվող անվտանգության օրենքի արդյունքում ոստիկանությունը ստացել է մեծ հնարավորություն եւ արգելվել է ընդդիմադիրների հրապարակներում բողոքելու իրավունքը: Նման ցույցերը անվտանգության ուժերի կողմից պատժվում են խիստ վերաբերմունքով եւ կազմակերպվում են առնվում են քայլեր: Ամենափոքր հանրահավաքում կամ բողոքի ցույցում հոսում է արյուն: Ամենավատը դա է, որ այս ոչ սովորական երեվույթը արդեն վերածվել է սովորական դեպքի:

Ընդդիմության ոչ կազմակերպված տեսքը, Էրդողանը օգտագործում է իր օգտին: Պարտություն կրելով հանդերձ հունիսյան ընտրություններում, նա երկիրը գրկում է իշխանությունից: Բացի այդ՝ երկարացնում է իր իշխանական օրերը, անհրաժեշտ է հիշեցնել, որ երկրում օրինական իշխանություն չկա:

Արդարություն եւ Բարգավաճում Կուսակցությունը կորցրել է խորհրդարանական մեծամասնությունը, բայց ընտություններից կարճ ժամանակ անց Ազգային ժողովը փակվեց ամառային արձակուրդի պատճառաբանությամբ: Ընդդիմադիր ուժերը ներկա պահում չեն կարողանում ցուցաբերել իրենց գործունեությունը:

Տարածաշրջանում շարունակվող պատերազմը վերջին ժամանակաշրջանում հզորացրել է Երդողանի քաղաքական մարտունակությունը: *Իսլամական Պետության* դեմ պայքարելու անվան տակ Երդողանը հնարավորություն է գտել Սիրիայում համախմբել ծայրահեղ կրոնականներին եւ հարձակել տալ Ասադի իշխանության վրա: Արդեն Երդողանի ղեկավարած Թուրքիան չի հրաժարվել *Իսլամական Պետության* հետ գաղտնի համագործակցելու մտքից:

Հարկ է նշել, որ Թուրքիայի արեւմտյան դաշնակիցների հետ մասնակցած օդային հարձակումների հիմքն է կազմում ծայրահեղ կրոնականների կորցրած տարածքների վերագրավումը: Նման ծայրահեղ կազմակերպությունները առանց Թուրքիայի օգնության չեն կարող պայքարել Դամասկոսի իշխանությունների դեմ: Սիրիայի հյուսիս-արեւմտյան բնակավայրեր՝ Իդլիբ եւ Ջիսր Ի Շուղուրը, Թուրքիայի ռազմական օգնության շնորհիվ անցել է իսլամիստների հսկողության տակ: Այսօր Ջարաբլուս կատարվող ռազմաօդային միջամտությունը նախատեսում է իսլամիստներին կրկին հզորացնել եւ գրավելու հնարավորություն տալ Թուրքիա-Սիրիա սահմանային գոտին: Սա կարելի է անվանել նաեւ Յավուզ Սուլթան Սելիմի արաբական աշխարհ կրկին մուտքը: Ռազմաօդային հարձակումից մի քանի օր առաջ ապորիսի պալատում բնակվող Երդողանը այցելություն էր կատարել Օսմանցիների թագավորներից Յավուզ Սուլթան Սելիմի գերեզմանը, որը ունի խորհրդանշական իմաստ: Թուրքիայի ռազմաօդային հարձակում կատարած բնակավայրում մոտավորապես 500 տարի առաջ տեղի էր ունեցել Մերջիդաբըլ ճակատամարտը, ընդ որում Օսմանցիները հաղթանակ ձեռք բերելով մուտք էին կատարել արաբական աշխարհ: Չնայած նա իր պահանջախնդրությունը վերջին ժամանակաշրջանում փարատում է ապորիսի պալատում ղեկավարած ուրբաթոյա *Էմիր-ուլ Մուսիսի*ն աղոթքներով: Բայց նա չի հրաժարվել Միջին Արեւելքի ղեկավարը լինելու երազից:

Ռազմաօդային միջամտությունը շոյում է նաեւ Թուրքիայում ծայրահեղ ազգայնամուլ եւ իսլամիստ բնակչության սիրտը: Դա նշանակում է, Երդողանի որոշած ժամկետում, նախատեսվող ընտրություններում նրանց աջակցությունը ստանալ:

Բացի այդ՝ այս միջամտությունը քրիստոնյաների տեսանկյունից նշանակում է 1915թ-ի ցեղասպանությունը կրկին տեղափոխել Թուրքիայի սահմաններից դուրս:

Հարկաւոր է ուշադրություն դարձնել նաեւ այլ իրականության վրայ: Երդողանը դաշնակից ուժերի հովանոցի տակ հնարավորություն է ստացել ՓԶԲ-ի դեմ պայքարել: Նա ՓԶԲ-ի դեմ պայքարելով փորձում է նրանց ուժերը քրեականացնել: Բայց անհրաժեշտ է հիշել, ընդ որում ապորիսի պալատում բնակվող անձին ուժ է պարգեվատրել նաեւ ՓԶԲ-ի ոչ հաշվարկված քայլերը: Այս քրեականացումը իր հետ բերում է «ահաբեկչության դեմ պայքարել» հասկացողությունը: Քրդական *ժողովրդների Դեմոկրատական Կուսակցությունը* նշյալ ճնշումների պատճառով կորցնելու է իր ուժը

Եւ համբավը: Դա էլ նշանակում է ամբողջ Թուրքիայի ժողովրդներին քաշել այս ճնշվածության տակ: Ռազմաօդային միջամտության առաջին օրից արդեն արգելվել է ընդդիմության ինտերնետային կայքէջերի հասանելիությունը, համացանցերի օգտագործումը եւ դանդաղացել է ինտերնետը: Մենք խոսում ենք այն երկրի մասին, որը հարսանիք զվարճանալու մեկնող երիտասարդներ է ձերբակալել՝ բողոքի ցույցի մասնակցելու հանցանքով: Այս օրերում Թուրքիայում բարձրանում է քաղաքական լարվածությունը եւ մեծանում են մարդկային կորուստները:

Վերելում իմ նշած *ահաբեկչության դեմ պայքարելու* անվան տակ ժողովրդի հանդեպ օգտագործվում է չափազանց ուժի կիրառում եւ արագօրեն պատրաստվում է պատերազմական մթնոլորտ:

Այս իրավիճակից ելնելով կարելի է ասել, որ բռնությունը աստիճանաբար տարածվում է, այլեւս հնարավոր չի խոսել խելքը գլխին քաղաքական քայլերի եւ խաղաղության մասին: Արդեն ուժգնության օրերում կողմերը չեն ցանկանում լսել մտավորականների ձայնը:

Այնուամենայնիվ անհրաժեշտ է օգտագործել խաղաղության լեզուն: Խաղաղությունը պահպանելու ցանկություն ունեցող անձիք պետք է գերծ մասն ուժգնություն պարունակող նախադասություններից, որը Էրդողանին տեղափոխում է բռնատերության գահը:

Ժողովրդի ցանկության հակառակ պատերազմական իրավիճակը, իրաժարվող իշխանության կյանքն է երկարացնում: Ապրիլի պալատում բնակվող անձի քարտուղարությունը շարունակում է նոր բանաձեւերի կիրառմանը: Գաղտի կերպով ընդունվող ռազմական միջամտության որոշումը առիթ է ներկայանում պատերազմի ընթացքում հարստանալու ցանկություն ունեցող Էրդողանի կողմնակիցներին: Թուրքիան գտնվում է վտանգավոր ընտրության դիմաց՝ Կա՛մ ընտրված քաղաքացիական բռնատիրություն կա՛մ էլ ժողովրդավարություն: Թուրքիան պետք է ընտրություն կատարի սեւ եւ սպիտակի միջեւ: Ժողովրդական ընդդիմությունը ունի Էրդողանի այս վտանգավոր խաղը ավերելու ուժ, հասունություն եւ վճռակամություն:

Այս վճռակամության արտահայտումն էր *Գեզի Այգու դեպքերը*:

